

Սիրանուշ Մ. Ֆահրադյան

ՀԱԿՈՒ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԱԼՎԱԾԱԳԻՐԸ՝

Կնիքների քննությամբ և Նախեղուոմ<sup>1</sup> գյուղի առնչությամբ\*

**Բանալի բառեր** – կալվածագիր, վանական հողատիրություն, կնքադրոշմ, կնիքն իբրև պատմական սկզբնաղբյուր, կնիքների արձանագրությունները և գեղարվեստական հարդարանքը, Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցի, վրաց կաթողիկոսներ Դոմենտիոս III Բատոնիձե և Նիկողոզ VII Ամիլախվարի, Աղվանից կաթողիկոսներ Պետրոս Խանձբեցի և Սիմեոն Խոտորաշենցի:

Մուտք

Ներկա հրապարակման մեջ ներկայացվող Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու (1655–1680) մագաղաթյա կալվածագիրը, որը պահվում է Մաշտոցյան Մատենադարանի (ՄՄ) արխիվի բաժնի «Կաթողիկոսական դիվան» (ԿԴ) ֆոնդում<sup>2</sup>, հետաքրքիր է ինչպես Սր Էջմիածնի հողային-կալվածական տիրությունները Արևելյան Վրաստանում ընդարձակելու նպատակով Հակոբ Զուղայեցու ծավալած գործունեության քննությամբ, այնպես էլ իբրև եկեղեցական պատմաիրա-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.06.2023:

1 **Նախեղուոմ, Նախիդուրի**, որ է՝ գյուղ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Բողնոփոր գավառում: Վրաց աղբյուրներում այդպես է կոչվել Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Արուլյո գյուղը (տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ. և ուրիշներ**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 3, Եր., 1991, էջ 951, ցուցակ 1): Հիշատակվում է. «Նախեղուոմն՝ ճապալայն, Տալաւէրն, գոր ինչ վրաց արքայի վիճակումն Հայք գտանին Գրիգոր Լուսաւորչոյ դաւանութեամբ բոլորն Հաղբատայ ծառայօղ լինին» (**Մուրադեան Պ. Մ.**, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը), Ս. Էջմիածին, 2007, էջ 230):

2 Տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 240, վավ. 5:

վական փաստաթուղթ՝ իր բազմաթիվ կնքադրոշմներով, որոնք ընդգծում են հարցի կարևորությունը: Թեև սույն վավերագիրն այս կամ այն չափով ուսումնասիրվել է, մասնավորապես հայտնի են Հ. Աբրահամյանի հրատարակած բնագիրը<sup>3</sup>, Ալեքսանդր Երիցյանի ռուսերեն թարգմանությունը՝ որոշ կրճատումներով լույս տեսած Դ. Պ. Պուրցելադեի աշխատության մեջ<sup>4</sup>, այլ հետազոտողների<sup>5</sup> հպանցիկ անդրադարձները փաստաթղթում տեղ գտած այլևայլ հարցերի, այդուհանդերձ, **ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնացել վավերագրում դրված կնքադրոշմները:** Այդ բացը փորձելու ենք լրացնել սույն հոդվածի շրջանակում՝ կալվածագրի բովանդակային մանրամասնությունները համադրելով կնիքների ուսումնասիրության հետ (տե՛ս նկ. 1):



Նկ. 1

### 1. Նախեղուռ գյուղի ձեռքբերումը

Հակոբ Զուղայեցին Սբ Էջմիածնի հողատիրական իրավունքների անրապնդման և ընդլայնման նպատակով, ինչպես բնագրի առաջաբանում է հիշատակվում, հետամուտ իր վաղեմի ցանկությանը, ձգտում էր տարածք ձեռք բերելու Վրաստանում: Այդ մտադրությամբ

3 Տե՛ս **Աբրահամյան Հ.**, Կալվածագրեր և սնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, Եր., 1941, էջ 159:  
 4 Տե՛ս **Пурцеладзе Д. П.**, Грузинские крестьянские грамоты, крепостные и судебные акты, грамоты и письма грузинских и персидских царственных особ (Материалы для истории древней Грузии), Тифлис, 1882, էջ 94-97:  
 5 Տե՛ս **Օհանյան Հ. Ռ.**, Վանական սնտեսություններն Արևելյան Հայաստանում ԺԸ դարում (ըստ Սիմեոն Երևանցու «Ջամբ» աշխատության), «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2015, N Ժ, էջ 52, **Թորոսյան Հ.**, Էջմիածնի վանական հողատիրությունը և նրա առանձնահատկությունները (16-18-րդ դդ.), «Հայոց պատմության հարցեր», հատ. 2, Եր., 2001, էջ 43:

1657 թվականին նա իր եղբոր որդու՝ Մանուելի ուղեկցությամբ մեկնում է Արևելյան Վրաստան՝ հանդիպելու Քարթլիի և Կախեթիի մահմեդական գահակալ Ռոստոմին (1632-1658) այն ակնկալիքով, որ եթե խանը<sup>6</sup> գյուղ նվիրաբերեր Սբ Էջմիածնին, ինքն այդ գյուղի մովրովությունը<sup>7</sup> կշնորհեր Մանուելին: Հակոբ Ջուղայեցու այցը հաջողությամբ է պսակվում. խանի առաջարկին՝ «որ երկիր կամի և հաւանի՝ յօժար սիրով շնորհելոց են»<sup>8</sup>, հետևում է հայոց կաթողիկոսի արձագանքը. «... ես ընտրութեամբ ազատ որդւոցն ինոց, խնդրեցի զՆախէդուն, որ ի վաղուց հետէ և անբնակ կայր, և ընտրուտամ խանն նորոգեալ էր»<sup>9</sup>: Նույն արխիվում պահպանվում է նաև Ռոստոմ թագավորի մի գրության օրինակ<sup>10</sup>, որում գյուղի նվիրատվությունը հետևյալ կերպ է արձանագրված. «... Նախեդուն մեր արքունի ճորտն և հայրենիքն, որք կային ի Նախեդուն, վասն երկարակեաց մեզ լինելոյ, նուիրեցաք Էջմիածնայ...»: Ասվածի համաձայն՝ կալվածագիրը, որն անփոփում է ապահարկության իրավունքով (բնագրում՝ «վախս»<sup>11</sup>) ժառանգական սեփականություն հանդիսացող (հայրենիք) Նախեդուն գյուղի նվիրաբերման պատմությունը, բայց և առավելապես գյուղի մովրովության առնչությամբ Հակոբ Ջուղայեցու խոսքը՝ «Որովհետև յառաջ խոստացեալ էի՝ վերստին հաստատեցի սիկիլով<sup>12</sup> որդւոց յորդի զմովրովութիւնն Նախեդուն»<sup>13</sup>, 1657 թվականին հաստատվելուց տասը տարի անց՝ 1667 թվականին, անհրաժեշտ էր վերստին արժա-

6 Գահակալ Ռոստոմին շնորհված «խան» և այլ տիտղոսների մեկնաբանությունը տե՛ս **Մարգարյան Գ.**, Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները Արևելյան Վրաստանում (XVI-XVIII դդ.), «Կանթեղ», Եր., 2014, էջ 186, ծնթ. 33:

7 Մովրով (վրաց. mouravi) – պարսից և վրաց տիրապետության ժամանակ Հայաստանում գավառապետի պաշտոնը (տե՛ս **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, էջ 1508):

8 ՄՄ, ԿԴ, թղթ. 240, վավ. 5:

9 Նույն տեղում:

10 Տե՛ս նույն տեղում, թղթ. 242, վավ. 1:

11 Վախս-ոխավ (պարսկ. vagf), որ է՝ եկեղեցիներին նվիրաբերվող անշարժ կալվածք, որը համարվում էր եկեղեցու մշտական սեփականությունը և ազատված էր հարկերից (տե՛ս **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 606, տե՛ս նաև **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 190): Վախսի, որոշ աղբյուրներում՝ վակֆայի իրավունքի առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **Թորոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 6:

12 Սիկիլ, սիկել, սիջիլ, սիգել՝ կնիք, դրոշմ, վկայական, հաստատուն գրություն (տե՛ս **Փափագյան Հ. Դ.**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I: Հրովարտականք, պրակ առաջին (ԺԵ-ԺԶ դդ.), Եր., 1956, էջ 120):

13 ՄՄ, ԿԴ, թղթ. 240, վավ. 5:

նացնել Վրաստանի հավանությանը: Այդ համաձայնությունը, փաստաթղթի օրինականությունն ու սեփականության պաշտպանությունը վավերացված են կալվածագրում դրված 26 կնքադրոշմներով:


## 2. Կնիքների քննություն

Հնամենի կանոնի համաձայն՝ վրաց կաթողիկոսներին պաշտոնական թուղթ գրելիս «Յիսուսի Քրիստոսի ծառայ» արտահայտությունից հետո նշվում էր հայոց հայրապետի անունը, և դրվում կնիքը, ապա՝ նրա անվան դիմաց, գրվում էր «Քեզ տեր .... (վրաց կաթողիկոսի անունը)»՝ այդ կերպ ընդգծելով երկու կողմերի իրավահավասարությունը<sup>14</sup>: Այս կարգն արտացոլվել է սույն վավերագրում, որի գլխագարդի մեջտեղում տեղ է գտել Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու՝ 4.9 սմ տրամագծով կարմրաներկ մեծ կնիքը (տե՛ս նկ. 2): Կնիքի շրջանաձև գրության մեջ հիշատակվում է.

**«Է/ Տ(Է)Ր Յ(Ա)Կ(Ո)Բ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)Ս ԱՄ(ԵՆԱՅՆ)  
Հ(Ա)Յ(Ո)Ց ԵՒ Պ(Ա)ՏՐ(ԻԱՐ)Գ Վ(Ա)Ղ(Ա)ՐՇ(Ա)Պ(Ա)Տ(Ո)Ի Ա(ՈՒՐ)Է  
ԱԹՈՌ(ՈՅ)Ն ԹՎ(ԻՆ) ՌՃԴ (1655)»**,

միջին շրջագծում.

**«Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) Յ[ԱԿՈՒՄ]  
Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ Զ(Ո)ՒՂ(Ա)Յ(Ե)ՑԻ ԹՎ(ԻՆ) ՌՁԵ (1636)»**<sup>15</sup>:



Նկ. 2

14 Տե՛ս Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո, Եր., 2003, գլուխ Ժ, էջ 88:

15 Կնիքների արձանագրությունների ընթերցման և վերծանման համար օգտագործել ենք հետևյալ պայմանական նշանները.

/ - նշվում է տողի սկիզբը,

/// - անկախ նիշերի քանակից՝ նշվում է արձանագրության վնասված մասը,

() - բացվում են հապավումները:

Կապգրություններն ու կցագրություններն ընդգծված են:

Կնիքն ամբողջանում է եզրային սահմանը բոլորող 12 առաքյալների գլուխների պատկերով, իսկ կենտրոնում Քրիստոս Ամենակալն է՝ աջ ձեռքն օրհնող դիրքով, ձախում պահելով Ավետարանը՝ մի կողմում «**Յ(ԻՍՈՒ)Ս**», մյուս կողմում «**Ք(ՐԻՍՏՈ)Ս**» մակագրությամբ: Կաթողիկոսը մեծ կնիքին զուգահեռ, համաձայն կարգի, վավերագրի ստորին հատվածի կենտրոնում դրոշմել է նաև իր անձնական փոքր, բոլորակ կնիքը հետևյալ արձանագրությամբ.

**«Է/ Յ(ԻՍՈՒ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) Յ(Ա)Կ(Ո)Բ  
Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)Ս ԱՄ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Ց»**,

կենտրոնում՝ եռատող.

**«Յ(Ա)ԿՈԲ/ Վ(Ա)ՐԳ(Ա)ՊԵՏ/ ԹՎ(ԻՆ) ՌՃԴ (1655)»**, կից հիշատակությամբ՝ **«Ձեռամբ իմով գրեցի առ ի հաստատութիւն գրոյս»**:

Հայոց կաթողիկոսի հաստատմանը հետևում է վրաց կաթողիկոսի մեծ կնիքը՝ ընդգծելով երկու կողմերի իշխանության հավասարությունը: 5.1 սմ տրամագծով, վերին մասում 3 մմ ձգվածությամբ, սև թանաքով կնիքը ևս գրությամբ և պատկերով է (տե՛ս նկ. 3): Եզրային շրջագծի՝ երկլեզվյան<sup>16</sup> հունարեն և վրացերեն գրի հնագույն տեսակ մխեդրովիով կազմված արձանագրության մեջ նշվում է.

**«[...] յ(ՅՅ)ց(ձ)Ն(ձ)Նձ. [Յջձ] ՅՆՅՕԼ. օցՕՆ. օջօ. Յ(ձ)Օձ: Մ(ՕՆձ)»**  
**«[...] երկրի [վրայ], արձակուած պիտի լինի երկնքում»**  
**«.... հայտնվեց երկրի վրա, թող հայտնվի երկնքում»**:

16 Պատմաքաղաքական և մշակութային փոխազդեցություններով պայմանավորված՝ վրացական կնքագիտության մեջ 17-րդ դարի կեսերից լայն տարածում են գտնում երկլեզվյան՝ վրացա-հայկական, վրացա-պարսկական, վրացա-հունական կնիքները: Մասնավորապես վրացական երկլեզվյան երկու ամենահին թագավորական կնիքները պատկանում են գահակալ Ռոստոմին՝ հիշեցնելով իրանական թագավորական կնիքների ընդօրինակություն և այդպիսով բնորոշվելով իբրև կիսով չափ մուսուլմանական, կիսով չափ քրիստոնեական (ավելի մանրամասն տե՛ս **Beradze G.**, Georgian seals of the 17th-18th centuries with bilingual and multilingual inscriptions, Moscow, 1986, էջ 4-5):



Նկ. 3

Ամենայն հավանականությամբ, արձանագրությունն առնչվում է Նոր Կտակարանի հետևյալ տողերին. «... ինչ որ արձակես երկրի վրա, երկնքում արդեն արձակված կլինի» (Ավետարան ըստ Մատթեոսի, 16:19)՝ ընդգծելով, որ կնիքը հոգևորականի է պատկանում: Կնիքի այս օրինակը, որ ընդհանրական է 17–18-րդ դարերի մի շարք վրաց կաթողիկոսների համար<sup>17</sup>, պատկերագրությամբ ներկայացնում է «Կենարար սյան հրաշալի հայտնությունը»<sup>18</sup>, որն ուղղակի առնչություն ունի սբ Նինոյի (Նունե<sup>19</sup>) միջոցով Վրաստանում քրիստոնեական վարդապետության տարածման հետ: Սրբուհու վարքի համաձայն՝ Աստծո կամոք և սբ Աստվածածնի օրհնությամբ սբ Նինոն ժամանում է Քարթլի՝ քարոզելու քրիստոնեական հավատքը: Ի քրիստոնեություն հավատափոխ եղած վրաց Միհրան թագավորի գործակցությամբ նա քանդել է տալիս հեթանոսական արձանները և փոխարենը եկեղեցի կառուցում նոր հավատքին ծառայելու համար: Եկեղեցի հենելու վեց սյուները կանգնեցվում են առանց խնդրի, մինչդեռ յոթերորդը հնարավոր չի լինում տեղափոխել: Սբ Նինոն և իր աշակերտները ողջ գիշեր աղոթում են, իսկ լուսադեմին պայծառ լույսով պարուրված մի երիտասարդ իջնում է երկնքից և բարձրացնում սյունը<sup>20</sup>: Սյան վերին մասում ձեռքերը վեր տարածած Աստծո պատկերն է, իսկ

17 Տե՛ս **Gonjilashvili N.**, The name of a Saint disclosed and established through iconography, “The Kartvelologist Journal of Georgian studies”, Tbilisi, 2014, N 20, էջ 4:

18 **Каковкин А. Я.**, Сцена «Чудесное явление живоносного столпа» в росписи церкви Григория в Ани, Зограф 20, Белград, 1989, с. 31.

19 Տե՛ս **Դավթյան Հ. Կ.**, Վիրքի քրիստոնեացումը, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2013, N 3 (43), էջ 25:

20 Տե՛ս **Каковкин А. Я.**, նշվ. աշխ., էջ 31:

ստորին հատվածում պատկերված է հին վրացական աղբյուրներում «Էլիոզի քույր», «առաքինությանը և բարեպաշտությանը զարդարված կույս», «մի կին», «ննջեցյալ»<sup>21</sup> բնորոշումներով հիշատակված և միայն 19-րդ դարում վրաց եկեղեցու կողմից Սիդոնիա անվամբ ընդունված առաջին սուրբը<sup>22</sup>: Նա պատկած դիրքով է՝ Աստծո անկար պատմունձանը սեղմած սրտին և աչքերը բաց: Սյան ձախ կողմում սբ Նինոն է՝ խաղողի ճյուղերից հյուսված հրաշագործ խաչը ձեռքին, իսկ աջում՝ սբ Աստվածածինը: Սբ Նինոյի հետևում երևում է տաճարի՝ հավանաբար Մցխեթի (Սվետիցխովելի) մանրակերտը:

Վրացական կնիքների ընթերցումը, որ իրականացվել է լեզվակիր մասնագետների խորհրդատվությամբ, ուղեկցվել է դժվարություններով ժամանակի ազդեցությամբ որոշ կնիքների վնասվածության, խունացման, պատմական անձերին առնչվող տարեթվերի բացակայության պատճառով: Այս առումով օգտակար է եղել սույն կոնդակի գրության մի օրինակ<sup>23</sup>, որում առավել լավ են պահպանված նախօրինակի կնիքների՝ տեղի նշումներին ուղեկցող գրությունները: Այս կնիքի աջ հատվածում տեղ գտած վրացերեն գրությունը ներկայացնում է կնքատիրոջ ինքնությունը.

**«ՅԱԵ(Պ)ՆԻՄՅ(Ո)ԼԻ: ՅԱՏ(Պ)ԼՈՅ(Պ)ՏԻ: Ը(Պ)ՄԵՆԸԻ: ՅՄ: ՄԵՐՈԼԻՍ:  
Մ(Ե) ՄՆԸՊՄԵ: ՅՅՐ»**

**«Բատոնիշվիլի կաթողիկոս Դոմենտ սույն գրությանը համաձայն են»:**

Փաստաթղթի հաստատման ժամանակը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ խոսքը վրաց Բագրատունիների տոհմի Մուխրանի իշխան Կայխոսրոյի կրտսեր որդու՝ Դոմենտիոս III Բատոնիձե (1660–1675) կաթողիկոսի մասին է: Որպես կանոն, –շվիլի վերջավորությամբ վրացական ազգանունները մատնանշում են և՛ ազգանուն, և՛ հայրանուն<sup>24</sup>: Իբրև տիտղոս՝ «Բատոնիշվիլի»-ն սովորաբար տրվում

21 Gonjilashvili N., op. cit., p. 2.

22 Տե՛ս նույն տեղում:

23 Տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 252, վավ. 7:

24 Տե՛ս **Какабадзе С. С.**, Грузинские документы Института Народов Азии АН СССР, М., 1967, էջ 5:

էր վրաց Բագրատունիների տոհմից սերող ներկայացուցիչներին և ածանցվում էր նրանց անուններին:

Վավերագրի ձախ լուսանցքում տեղ գտած կնքադրոշմների շարքը սկսվում է մեկ այլ՝ վրացական խաչազարդ կնիքով (տե՛ս նկ. 4), որի վատ պահպանվածության պատճառով բուն կնիքի արձանագրությունն անընթեռնելի է: Սակայն կնիքին ուղեկցող գրությունը հիշատակում է.

**«Ես՝ Ամիլախվարաշվիլի Նիկոլոզ կաթողիկոսս սոյն գրութեանը հոժար եմ»:**



Նկ. 4

Ենթադրում ենք՝ կնիքը պատկանում է վրաց Նիկոլոզ VII Ամիլախվարի (1676–1687) կաթողիկոսին, որի աթոռակալության տարիները թույլ են տալիս ենթադրել, որ գրության կնքման ժամանակ նա չէր կարող իբրև կաթողիկոս մասնակցություն ունենալ փաստաթղթի վավերացմանը, հետևաբար կնիքը հետագայում է դրվել:

Ըստ վրացական աղբյուրագիտության՝ միջնադարյան վավերագրի տեսակը և անվանումը սահմանվում էին իր բնույթին և ինչ-ինչ առանձնահատկություններին համապատասխան: Պաշտոնական գրություններին տրվող «դացերիլի»<sup>25</sup>, «բրձաներա»<sup>26</sup>, «ցերիլի»<sup>27</sup> և այլ եզրույթներին զուգահեռ՝ ողջ միջնադարում իբրև թագավորական

25 **Դացերիլի**՝ «գրած» (տե՛ս **Գորգաձե Ռ. Կ.**, Վրացերեն-հայերեն բառարան, Եր., 2005, էջ 235):

26 **Բրձաներա**՝ «հրամանագիր, կարգադրություն» (տե՛ս նույն տեղում, էջ 84):

27 **Ցերիլի**՝ «նամակ, գրություն» (տե՛ս նույն տեղում, էջ 671):



հրամանագրերին ամենից հաճախ տրվող անվանում հանդիպում է «սիգել»-ը, որ գալիս է լատիներեն «sigillum»<sup>28</sup> «կնիք» բառից<sup>29</sup>: Գահակալի պատկերով և թագավորական մեծ կնիքով հաստատված սիգելները սկսվում էին թագավորի տիտղոսաշարով, որին հետևում էր բուն տեքստը<sup>30</sup>: Որպես «սիգել» եզրույթի հոմանիշ, 14-րդ դարից սկսած, ինչպես թագավորական, այնպես և եկեղեցական գրությունների համար շրջանառվում էր արաբերեն «հուջա»<sup>31</sup> բառից առաջացած «գուջարի» եզրույթը<sup>32</sup>, որն առավելապես կիրառվում էր սեփականության վերաբերյալ իրավական փաստաթուղթ ներկայացնելու համար: 17-րդ դարի գուջարիներից կարելի է պատկերացում կազմել Վրաստանում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների մասին:

Թեև հստակ չէ, թե վրացական թղթագրության ինչ եզրույթով է տրվել Նախետոնան ընծայման հրամանը, այնուամենայնիվ, այն ուշադրություն է գրավում վանական հողատիրության նկատմամբ եկեղեցու և պետության դիրքերը քննելու տեսանկյունից: Մասնավորապես գահակալ Ռոստոմի և Ժամանակի կաթողիկոսների միջև ծագած խռովությունների<sup>33</sup> հաղթահարումից հետո նկատելի էին եկեղեցու և աշխարհիկ իշխանության սերտ փոխգործակցություն, հողի տնօրինման հարցում միմյանց փոխադարձաբար լրացնելու միտում, ինչը ուղղված էր եկեղեցու դերի բարձրացմանը: Պետության աջակցությունը պայմանավորված էր թե՛ կրոնական նկատառումներով, թե՛ եկեղեցու հավատարմությունն ապահովելու ձգտմամբ<sup>34</sup>: Պետության կողմից հողի սեփականության հովանավորությունն արտահայտվում

---

28 **Սիգել, սիգել** (լատ. sigillum, հուն. sigillion)՝ «կնիք, հրամանագիր, հրովարտակ, գրավոր հրամանը պարունակող կնքված թուղթ» (տե՛ս **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, նշվ. աշխ., էջ 700):

29 Տե՛ս **Какабадзе С. С.**, նշվ. աշխ., էջ 15-17:

30 Տե՛ս **Пურიцелдзе Д. П.**, Грузинские церковные гуджари (грамоты), Тифлис, 1881, էջ II:


31 **Հուջա** (արաբ. hujah)՝ «փաստարկ, ապացույց, իրավական փաստաթուղթ սեփականության վերաբերյալ» (տե՛ս **Баранов Х. К.**, Большой арабско-русский словарь, т. 1, М., 2002, էջ 156):

32 Տե՛ս **Какабадзе С. С.**, նշվ. աշխ., էջ 15:

33 Տե՛ս **Մարգարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 188:

34 Տե՛ս **Таварткиладзе Д. Т.**, Землевладение Грузинской православной церкви в XVI–XVII вв., «Вестник Московского университета. Серия 13. Востоковедение», М., 2012, N 4, էջ 11:

էր նաև եկեղեցապատկան կալվածքները պարբերաբար վերահաստատելու կարգով<sup>35</sup>:



Նկ. 5

Վերադառնանք կնիքներին: Վրաց կաթողիկոսի կնիքին հաջորդում են Աղվանից երկու կաթողիկոսների՝ Պետրոս Խանձբեցու (1653–1678) և Սիմեոն Խոտորաշենցու (1675–1701) կնիքները (տե՛ս նկ. 5, 6): Կնքադրոշմներն իբրև պատմական սկզբնաղբյուրներ համարելով այլ աղբյուրների հետ՝ փորձենք վերականգնել դեպքերի ընթացքն ու ներկայացնել կնքողների ինքնությունը:

Առաջին՝ հնգատող կնիքի արձանագրությունը հետևյալն է.

**«Է/ Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ)/ ՊԵՏՐ(ՈՍ)Ս  
Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(ՈՍ)Ս/ ԱՂ(ՈՒԱ)Ն(Ի)Յ ԹՎ(ԻՆ) Ռ//»:**

Ուղեկցող գրությունը.

**«Ես՝ Պետրոս կաթողիկոս Աղուանից, Տեառն Յակոբայ, կաթողիկոսի ամենայն Հայոց և վարդապետաց յօժարութեամբ և կամօք մօհրեցի»:**


Սովորաբար կաթողիկոսների թվակիր կնիքներին նշված թվականը համապատասխանում է նրանց՝ կաթողիկոսական աթոռում հաստատվելու տարեթվին:

Պետրոս Խանձբեցու կնիքը, որի վերջին տողի աջ անկյունում տարեթիվն է, ջնջվել է: Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին Պետրոս Խանձբեցուն Աղվանից կաթողիկոս է ձանաչել 1672 թվականին՝ Էջմիածնում իշխանության գավազան շնորհելով, սակայն Պետրոս Խանձբեցին 1653 թվականին արդեն Աղվանքի օծյալ կաթողիկոս էր<sup>36</sup>: Ուստի, ամենայն հավանականությամբ, կնքադրման ժա-

35 Տե՛ս նույն տեղում, էջ 6:

36 Տե՛ս Մկրտումյան Լ. Ա., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձբեցի կաթողիկոսի օրոք (1653–1678 թթ.), «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2000, N 1, էջ 94:

մանակը կարող է ավելի վաղ լինել, քան 1672 թվականը: Հակոբ Զուղայեցու և Պետրոս Խանձբեցու հարաբերություններում, ըստ ամենայնի, տարաձայնություններ չեն եղել, ինչն այս վավերագրում արտահայտվել է Պետրոս կաթողիկոսի կնքադրամամբ: Այլ է Սիմեոն Դ Խոտորաշենցու պարագան:



Նկ. 6

Քառատող կնիքի արձանագրությունը հետևյալն է.

**«Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի/ Ճ(Ա)Ռ(Ա)Յ  
ՍԻՄԷՕՆ/ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)Ս ԱՂ(ՈՒԱ)Ն(Ի)Յ/  
ԹՎ(ԻՆ) ՌՃԻԴ (1675)»:**

Ուղեկցող գրությունը.

**«Ես Սիմեոն կաթողիկոսս Աղուանից  
յօժար եմ յայսմ գրեցելոյ»:**

Ինչպես տեսնում ենք, կնքադրաման տարեթիվն է «ՌՃԻԴ (1675)»-ն, որը, ըստ որոշ պատմական աղբյուրների, համապատասխանում է Սիմեոն Խոտորաշենցու աթոռակալության տարեթվին, մինչդեռ վերջինիս՝ կաթողիկոս դառնալու հանգամանքները բավական հակասական են: Սիմեոն Երևանցու «Զամբո» աշխատության մեջ նշվում է, որ Պետրոս Խանձբեցու մահից անմիջապես հետո՝ 1675 թվականին, նրա աշակերտ Սիմեոն Խոտորաշենցին, առանց Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու ինացության և հրամանի, օծվում է Գանձասարի կաթողիկոս: Ապա, հավաքելով աթոռի եկամուտներն ու ունեցվածքը, հեռանում է կաթողիկոսանիստ Գանձասարից՝ հաստատվելով Խոտորաշենում: Հակոբ Զուղայեցին բանադրում է Սիմեոնին և, Աղվանքից էջմիածին կանչելով Երեմիա Հասան-Ջալալյանին, 1676 թվականին նրան է օծում կաթողիկոս<sup>37</sup>: Գանձասարի երկու կաթողիկոսների խռովությունը որոշ չափով մեղմվում է Հակոբ Զուղայեցու միջնորդությամբ 1677 թվականին Վրաստանում կայացած հաշտությամբ: Այս համատեքստում ուշագրավ է նաև Սիմեոն Խոտորա-

37 Տե՛ս Սիմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., գլուխ Ժ, էջ 112:

շենցու՝ 1677 թ. օգոստոսի 25-ին գրած հանձնառագրի պատճենը<sup>38</sup>, որով վերջինս պարտավորվում էր այլևս չհետևել կաթողիկոսական գործերին: Փաստաթղթի՝ բնագրին համապատասխանությունը հետագայում հաստատվել է Էջմիածնի միաբանների և Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (1763-1780) կնիքով՝ «Է/ ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ/ ՌՄԺԲ (1763)»»:

Սիմեոն Խոտորաշենցու՝ կաթողիկոս օժվելու առնչությամբ այլ իրողություն է ներկայացնում 1675 թվականին Քարահատ գյուղում գրված Ավետարանի հիշատակարանը. «... ի հայրապետութեան Տանս Աղուանից Տեառն Սիմէօնի ամենիմաստ և սրբանուէր Հայրապետի Սրբոյ Աթոռոյն Գանձասարա՝ աշակերտ տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսի նոյն յԱթոռոյն, որ ի սոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս և հաստատուն կտակօք սահմանեաց, որ յետ իւրոյ մահուն զՍիմէօն րաբունապետն լինիցի կաթուղիկոս, որ և օգնականութեամբ Սուրբ Հոգւոյն և կանակցութեամբ ամենայն մեծամեծաց Տանս Աղուանից, նաև հրամանաւ թագաւորին պարսից և մեծի Հայրապետին Տեառն Յակօբայ պատրիարգին Սրբոյ Էջմիածնի»<sup>39</sup>: Չնայած իր և Սիմեոն Խոտորաշենցու բարդ փոխհարաբերություններին՝ 1675 թվականին Հակոբ Ջուղայեցին հաստատել է Սիմեոն Խոտորաշենցուն որպես Գանձասարի կաթողիկոս, սակայն հետագայում՝ 1676 թ., նկատի ունենալով Հասան-Ջալալյան իշխանական տոհմի մտայնությունները, կաթողիկոս է օժել Երեմիա Հասան-Ջալալյանին<sup>40</sup>: Լ. Մկրտումյանի այս վերլուծությունը<sup>41</sup> հաստատվում է կալվածագրում Սիմեոն Խոտորաշենցու կնիքով, որը թույլ է տալիս ենթադրություններ անել Հակոբ Ջուղայեցու՝ Սիմեոնին իբրև կաթողիկոս և հեղինակություն ընդունելու մասին, հակառակ դեպքում դրանում կլինեք Երեմիա Հասան-Ջալալյանի կնիքը:

38 Տե՛ս ՄՄ, ԿԳ, թղթ. 240, վավ. 1, **Օհանյան Հ. Ռ.**, Սիմեոն Երևանցու «Ջամբը» որպես Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների փոխհարաբերությունների պատմության սկզբնաղբյուր, «Պատմություն և մշակույթ», Եր., 2016, էջ 289:

39 ՄՄ, ձեռագիր հմր. 8965, էջ 361բ-362ա: Այս մասին տե՛ս նաև **Մաղալյան Ա. Վ.**, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2008, N 3, էջ 270:

40 Տե՛ս **Բարխուտարեանց Մ. Եպիսկոպոս**, Պատմութիւն Աղուանից, հատ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 69:

41 Տե՛ս **Մկրտումյան Լ. Ա.**, Սիմեոն եւ Երեմիա կաթողիկոսների հակաթոռության խնդիրը 17-րդ դ. վերջին քառորդին, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2000, N 9, էջ 79:

Աղվանից երկու կաթողիկոսների փոխհարաբերությունների քննության առումով հետաքրքրական է նաև կալվածագրի վերջին հատվածը, որը կառուցված է թղթագրության «վակֆ» տեսակին բնորոշ կտակի և այդ կտակը խախտողների հասցեին ուղղված անեծքի ձևաչափով<sup>42</sup>: Այն ներառում է Հակոբ Զուղայեցու՝ Մանուելի մովրդությունն անխախտ պահելու պատգամը և երկու կաթողիկոսների խռովությունը մատնանշող հետևյալ ուշագրավ վկայությունը. «Իսկ զկնի վախճանի իմոյ որք հակառակին իմոյս տուեալ հրամանիս և հաստատեալ սիկիով մովրովութան, անէծքն Կայենին առցեն և պատիժն կորխանցն կրեսցեն, որ հակառակեցան և յանդնդասուզ եղեն. անիծեալ լիցին յԱստուծոյ և ամենայն սրբոց նորայ: Իսկ թէ զկնի որդւոյն իմոյ պարոն Մանուէլին որդւոց և թոռանց ժամանակն անուղղայ գնացիւք լինին և Սուրբ Աթոռոյն անօգուտ, և մերոյ անուանն և տուեալ իշխանութանս անարժան, **ժամանակի կաթողիկոսն երկու և երիցս խրատելոյն և յանդիմանելոյն** (ընդգծումը մերն է – Ս. Ֆ.) եթէ ոչ գայցէն յուղղութին, իշխանութին լիցի այն ժամանակին կաթողիկոսին, առնուլ՝ ում և կամի պարգևէ, իշխանէ, անխիղճ արասցէ»<sup>43</sup>:

Այսպիսով՝ վավերագրում ինչպես վրաց, այնպես էլ Աղվանից կաթողիկոսների կնքադրմամբ վերահաստատվում է Հակոբ Զուղայեցու որոշումը: Ընդ որում հետագայում վրաց Ամիլխավարաշվիլի և Աղվանից Սիմեոն կաթողիկոսների կնքադրումները հիմք են տալիս ենթադրություններ անելու հարցը պարբերաբար վերահաստատելու անհրաժեշտության մասին, չնայած որ վանական հողատիրությունը ամենակայուն իրավական հիմքերով ամրագրվող կալվածատիրությունն էր<sup>44</sup>:

Ստորև ներկայացվում են նաև վավերագրում հաջորդաբար տեղ գտած մյուս կնքադրոշմները՝ մեր և բնագրի հրատարակիչ Հ. Աբրահամյանի որոշ տարրնթերցումներով: Վերջինս, իր աշխատության առաջաբանում խոսելով կնիքների ընթերցումների մասին, նշում է. «Այն դեպքերում, երբ կնիքը դրոշմված է եղել առանց ստորագրու-

---

42 Տե՛ս **Փափագյան Հ. Գ.**, Վանական կալվածքների սեփականատիրական մի քանի առանձնահատկություններ (XV–XVIII դդ.), «Բանբեր Մատենադարանի», Եր., 1971, N 10, էջ 239:

43 ՄՄ, ԿԴ, թղթ. 240, վավ. 5:

44 Տե՛ս նույն տեղում:



8. Բոլորակ, սև թանաքով, քառաստող. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի/ Ծ(Ա)Ռ(ԱՅ) ԱԻԵՏ/ԻՍ ԵՊ(Ի)ՍԿ(Ո)ՊՈՍ/ ԹՎ(ԻՆ) ՌՂԹ (1650)»:

9. Բոլորակ, սև թանաքով, քառաստող. «Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ)/ ԱՌ(Ա)ՔԷԼ Վ(ԱՐ)Դ(Ա)Պ(Ե)Տ/ ՍՊ(Ա)Ս(Ա)ԻՈՐ Ա(ՈՒՐ)Բ Կ(Ա)Ր(Ա)Պ/(Ե)ՏԻ / ԹՎ(ԻՆ)»:

Վավերագրի ստորին հատվածում՝ ձախից աջ տեղ գտած կնիքները.

10. Բոլորակ, սև թանաքով, եռաստող. «ԹՎ(ԻՆ) / ՅՈՂԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ / ՌՁԸ (1639)»:

11. Բոլորակ, սև թանաքով. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ)/ Յ(Ո)Հ(Ա)ՆՆԷՍ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ ԹՎ(ԻՆ) ՌՂԱ (1642)», կենտրոնում «Կ(Ա)Ր(Ա)Պ(Ե)ՏՅԻ»:

12. Բոլորակ, սև թանաքով, կապգրութայամբ. «ԳԱՐԻԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ»:

13. Բոլորակ, սև թանաքով. «Է/ Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)Յ Ս(Ա)Հ(Ա)Կ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ ԹՎ(ԻՆ) ՌՃԺԲ (1663)», կենտրոնում քառաստող. «ԱԹՈՌԱԿ(Ա)Լ Ս(ՈՒՐ)Բ ԱՌ(Ա)ՔԵ/ Լ(Ո)ՅՆ Թ(Ա)ԴԷ(Ո)ՍԻ/ /ԹՎ(ԻՆ) ՌՃԺԲ (1663)»:

14. Բոլորակ, սև թանաքով. «Է/ Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)Յ ՄԻՆԱՍ ՎԱՐԴ(Ա)ՊԵՏ», կենտրոնում եռաստող. «ԶՈՒՂ/ԱՅԵՑԻ/ ԹՎ(ԻՆ) ՌՃԺ (1661)»:

15. Բոլորակ, սև թանաքով. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ԾԱՌԱՅ ՄԻՔԱԷԼ Վ(ԱՐ)Դ(Ա)Պ(Ե)Տ», կենտրոնում երկստող. «ԹՎ(ԻՆ) Ռ/ՂԳ (1644)»:

16. Բոլորակ, սև թանաքով. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(Ա)Յ ՍՏ(Ե)Փ(Ա)ՆՈՍ Վ(Ա)ԸԴ(Ա)Պ(Ե)Տ ԹՎ(ԻՆ) [Ռ]ՃԻ (1671)», կենտրոնում «///ՀԻ»:

17. Բոլորակ, սև թանաքով, կապգրությամբ. «ՅՈՒՆԱՆ  
ՎԱՐԴԱՊԵՏ»:

18. Բոլորակ, սև թանաքով. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ԾԱՌԱՅ  
Յ(Ո)Հ(Ա)Ն Վ(ԱՐ)Դ(Ա)Պ(Ե)Տ Ջ(Ո)ԻՂ(ԱՅԵ)ՑԻ ԹՎ(ԻՆ) [Ռ]ՃԺԵ (1666)»:

19. Բոլորակ, սև թանաքով. «Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ԾԱՌԱՅ  
ԱԻԵՏԻՔ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ», կենտրոնում՝ եռատող. «ՏՓԽ(ԻՍ)Ե/ՑԻ  
ԹՎ(ԻՆ) Ռ/ՃԹ (1660)»:

20. Անընթեռնելի:

Վավերագիրն ամփոփվում է հետևյալ հիշատակությամբ. «**Ես  
Իսահակ վարդապետս ըստ վեհագոյն հոգևոր Տեառն կնքելոյ և  
հաստատելոյ և ըստ վարդապետացս վկայելոյ և ես մօհրեցի<sup>46</sup> և  
ձեռագրեցի**»։ Վարդապետների անձնական կնիքների տարերթվերը  
(1660-1671 թթ.) ցույց են տալիս, որ այստեղ ևս կան հետագայում  
դրված կնիքներ:

Այսպիսով՝ կալվածագրում դրված կնիքների ընթերցումը և  
ուսումնասիրությունը թույլ են տալիս բացահայտել վանքապատկան  
կալվածքի ձեռքբերման և պահպանման գործընթացը, ինչպես նաև  
փաստաթղթի իրավական կարգավիճակի սահմանման մասնակից-  
ներին:

Հայկական կնիքներն իրենց կառուցվածքով, հայերեն արձանա-  
գրություններով և պատկերագրությամբ ամբողջությամբ ներկայաց-  
նում են կնքադրման հայկական ավանդույթները, իսկ վրացական  
կնիքները՝ վրաց եկեղեցու սկզբնավորման հիմնական ուղերձները,  
խորհրդարանությունն ու պատկերագրման ոճը:

**Սիրանուշ Մ. Ֆահրադյան** – գիտական հետաքրքրությունների շրջա-  
նակն ընդգրկում է ուշ միջնադարի հայոց վավերագրական ժառանգության  
ուսումնասիրությունը՝ իր տարաբնույթ դրսևորումներով: Հետազոտություն-  
ները հիմնականում առնչվում են 17-19-րդ դդ. գրավոր սկզբնաղբյուրներում  
տեղ գտած հոգևոր և աշխարհիկ բնույթի կնիքների ուսումնասիրությանը,

46 **Մօհր, մուհր** (պրսկ. mohr)՝ «կնիք, դրոշմ» (տե՛ս **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան  
Հ. Մ.**, նշվ. աշխ., էջ 542):



դրանց արձանագրություններին և գեղարվեստական առանձնահատկություններին:

Էլ. հասցե՝ fahradysiranush@gmail.com

Summary

## **THE DEED OF PURCHASE OF HAKOB DZHUGAETSI**

With the study of seals and regarding village Nakhedur

Siranush M. Fahradyan

**Key words** – Deed of purchase, monastic landownership, seal, seal as a historical source, inscriptions and decorations on seals, catholicos of All Armenians Hakob Dzhugaetsi, catholicos of Georgia Domentios III Batonidze and Nikoloz VII Amilakhvari, catholicos of Artsakh Petros Khandzketsi and Simeon Khotorashentsi.

From the numerous documents assembled in the archival fund “Divan of Catholicos” of the Matenadaran named after Mesrop Mashtots, a deed of purchase of the Armenian catholicos Hakob Jughaetsi (1655-1680), approved in 1667, was presented.

It refers to the donation of Nakhedur village issued by the Georgian king Rostom (1632-1658) to St. Etchmiadzin in 1657. This is interesting both from the point of view of the expansion and preservation of the Etchmiadzin estates in Eastern Georgia, and the church historical-legal document with many seals expressed in it, which emphasize the importance of the issue.

Particular attention was paid to the reading of the inscriptions and the decorations of the seals belonging to the catholicos of All Armenians Hakob Jughaetzi, two catholicoses of Georgia, the catholicos of Artsakh, and the seals of other representatives of the clergy.

Armenian seals with their language, inscriptions, semantics, and images fully express the Armenian traditions of sealing, and the Georgian seals illustrate the main messages and iconographic motifs of the Georgian Church.

## КУПЧАЯ АКОПА ДЖУГАЕЦИ

Относительно села Нахедур, с исследованием печатей

Сирануш М. Фаградян

**Ключевые слова** - купчая, монастырское землевладение, печать, печать как исторический источник, надписи и художественное оформление печатей, католикос Всех Армян Акоп Джугаеци, католикосы Грузии Доментиос III Батонидзе и Николоз VII Амилахвари, католикосы Арцаха Петрос Хандзкеци и Симеон Хоторашенци.

Из множества документов архивного фонда «Диван Католикосов» Матенадарана им. Месропа Маштоца в данной статье рассматривается купчая армянского католикоса Акопа Джугаеци (1655-1680), датированная 1667 г.

В документе представлен факт дарения села Нахедур грузинским царем Ростомом (1632-1658) Св. Эчмиадзину в 1657 г. Данный памятник интересен и с точки зрения сохранения и увеличения Эчмиадзинских имений в Восточной Грузии, и как церковный историко-правовой документ со множеством печатей, подчеркивающих важность этого события.

Особое внимание нами уделялось надписям на печатях католикоса Всех Армян Акопа Джугаеци, двух католикосов Грузии, католикосов Арцаха и других представителей духовенства и их художественному оформлению.

Армянские печати своей структурой, семантикой, надписями на них и иконографией в полной мере отражают армянские традиции оформления печатей, а грузинские печати – основные послания и иконописные мотивы Грузинской церкви.

## REFERENCES

1. **Abrahamyan H.**, Kalvatsagrер yev intesakan ayl gortsark'neri veraberyal arkhivayin vaveragrер, prak 1, Yer., 1941 (**In Armenian**).
2. **Barkhutareants' M. yepiskopos**, Patmut'iwn Aghuanits', hat. B, T'iflis, 1907 (**In Armenian**).
3. **Davt'yan H. K.**, Virk'i k'ristoneats'umě, "Vēm" hamahaykakan handes, Yer., 2013, N 3, ēj 21-50 (**In Armenian**).
4. **Ghazaryan R. S., Avetisyan H. M.**, Mijin hayereni bařaran, Yer., 2009 (**In Armenian**).
5. **Gorgadze R. K.**, Vrats'eren-hayeren bařaran, Yer., 2005 (**In Armenian**).

6. **Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan St. T. yev urishner**, Hayastani yev harakits' shrjanneri tghanunneri bařaran, hat. 3, Yer., 1991 **(In Armenian)**.
7. **Kakabadze S. S.**, Gruzinskije dokumenty Instituta Narodov Azii AN SSSR, M., 1967 **(In Russian)**.
8. **Kakovkin A. Ja.**, Scena "Chudesnoje javlenije zhivonosnogo ctolpa" v rospisi cerkvi Grigorija v Ani, Zograf 20, Belgrad, 1989 **(In Russian)**.
9. **Maghalyan A. V.**, Aghvanits' (Gandzasari) kat'oghikosneri gavazanagirk'ě, "Patma-banasirakan handes", Yer., 2008, N 3, ěj 268-271 **(In Armenian)**.
10. **Malkhaseants' S.**, Hayerĕn bats'atrankan bařaran, Yer., 1944 **(In Armenian)**.
11. **Margaryan G.**, Hogevor yev ashkharhik ishkanut'yunneri pokhharaberut'yunnerĕ Arevelyan Vrastanum (XVI-XVIII dd.), "Kant'egh", Yer., 2014, N 2-3, ěj 181-196 **(In Armenian)**.
12. **Mkrtyumyan L. A.**, Gandzasari kat'oghikosut'yunĕ Petros Khandzk'ets'i kat'oghikosi ěrok' (1653-1678 t't'), "Lraber" has. git., Yer., 2000, N 1, ěj 88-97 **(In Armenian)**.
13. **Mkrtyumyan L. A.**, Simeon yev Yeremia kat'oghikosneri hakat'orut'yan khndirĕ 17-rd d. verjin k'arordin, "Ējmiatsin", S. Ējmiatsin, 2000, N G, ěj 75-83 **(In Armenian)**.
14. **Muradean P. M.**, Yishatakaran Sanahnoy vanits' (Sanahni k'ĕĕt'ukĕ), S. Ējmiatsin, 2007 **(In Armenian)**.
15. **Ėhanyan H. R.**, Simeon Yerevants'u "Jambrĕ" vorpes S. Ējmiatsni yev Gandzasari kat'oghikosut'yunneri p'okhharaberut'yunneri patmut'yan skzbnaghybur, "Patmut'yun yev mshakuyt'", Yer., 2016, N 27, ěj 285-296 **(In Armenian)**.
16. **Ėhanyan H. R.**, Vanakan tntesut'yunnern Arevelyan Hayastanum ZHĔ. darum (ĕst Simeon Yerevants'u "Jambr" ashkhatut'yan), "Ējmiatsin", S. Ējmiatsin, 2015, N ZH, ěj 46-57 **(In Armenian)**.
17. **P'ap'azyan H. D.**, Matenadarani parskeren vaveragreĕ, I: Hrovartakner, prak ařajin (ZHYE-ZHZ dd.), Yer., 1956 **(In Armenian)**.
18. **P'ap'azyan H. D.**, Vanakan kalvatsk'neri sep'akanatirakan mi k'ani ařandznahatkut'yunner (XV-XVIII dd.), "Banber Matenadarani", Yer., 1971, N 10, ěj 237-250 **(In Armenian)**.
19. **Purceladze D. P.**, Gruzinskije krest'janskije gramoty, krepostnyje i sudebnyje akty, gramoty i pis'ma gruzinskix i persidskix carstvennyx osob: (Materialy dlja istorii drevnej Gruzii), Tiflis, 1882 **(In Russian)**.
20. **Purceladze D. P.**, Gruzinskije cerkovnyje gudzhari (gramoty), Tiflis, 1881 **(In Russian)**.
21. **Simeon kat'oghikos Yerevants'i**, Jambr, Yer., 2003 **(In Armenian)**.
22. **Tavartkiladze D. T.**, Zemlevladienije Gruzinskoj pravoslavnoj cerkvi v XVI-XVII vv., "Vestnik Moskovskogo universiteta. Serija 13. Vostokovedenije", 2012, N 4, s. 70-82 **(In Russian)**.
23. **T'orosyan H.**, Ējmiatsni vanakan hoghatirut'yunĕ yev nra ařandznahatkut'yunnerĕ (16-18-rd dd.), "Hayots' patmut'yan harts'er", hat. 2, Yer., 2001 **(In Armenian)**.